Կարգապահական գործ թիվ 17192

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018թ-ի հուլիսի 24-ի թիվ 190-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/138-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՏԻԳՐԱՆ ԵԳՈՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Հարություն Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Սարդարյանի.

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Տիգրան Եգորյանին (արտոնագիր՝ 1187) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

18.12.2017թ. Պալատ մուտքագրվել է Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի **(այսուհետ՝ նաև Դատարան կամ Դիմող)** դատավոր Տ. Գրիգորյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 08.12.2017թ. որոշումը **(այսուհետ նաև՝ Որոշում)**, որում նշվել է, որ Դատարանի վարույթում քննվող թիվ ԵԱԴԴ/0028/01/17 քրեական գործով 2017թ. դեկտեմբերի 8-ի դատական նիստում մեղադրող Պ. Պետրոսյանի կողմից միջնորդություն է ներկայացվել ամբաստանյալ Գ. Սաֆարյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու մասին: Ամբաստանյալի պաշտպան փաստաբան Տիգրան Եգորյանը միջնորդություն է ներկայացրել դատական նիստը հետաձգելու մասին՝ մեղադրողի միջնորդության վերաբերյալ կարծիք հայտնելու համար ժամանակ տրամադրելու պատճառաբանությամբ: Դատարանի կողմից միջնորդությունը մերժվել է: Միաժամանակ Դատարանը որոշել է դատական նիստն ընդմիջել 30 րոպե ժամանակով՝ Տիգրան Եգորյանին հնարավորություն տալով միջնորդության վերաբերյալ կարծիք հայտնել: Նշված ժամկետի ավարտից հետո վերսկսված դատական նիստին փաստաբան Տիգրան Եգորյանը չի ներկայացել և չներկայանալու հարգելի պատճառների մասին Դատարանին նախապես չի տեղեկացրել:

Դատարանը Որոշմամբ Տիգրան Եգորյանի վարքագիծը դիտարկել է որպես անհարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ, քանի որ Տիգրան Եգորյանը չարամտորեն խուսափել է 08.12.2017թ. դատական նիստն ընդմիջվելու ժամկետի ավարտից հետո ներկայանալ Դատարան և առանց որևէ հարգելի պատճառի՝ չի կատարել քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալու դատավարական պարտականությունը, ինչով անհարգալից վերաբերմունք է դրսևորել Դատարանի նկատմամբ:

Դատարանը 08.12.2017թ. կայացրել է «Դատական սանկցիա կիրառելու մասին» որոշում, որով որոշել է փաստաբաններ Տիգրան Եգորյանի նկատմամբ կիրառել դատական սանկցիա՝ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով դիմելով փաստաբանական պալատ:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 27.12.2017թ. թիվ 485-Ա/ԿԳ-17192 որոշմամբ փաստաբան Տիգրան Եգորյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

28.12.2017թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հունան Բաբայանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել: Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողը բացատրություն չի ներկայացրել:

18.06.2018թ. Պալատ է մուտքագրվել Պատասխանողի դիմումը, որում հայտնվել է հետևյալը.

Դատարանը Պատասխանողի նկատմամբ դատական սանկցիա կիրառելու որոշման հիմքում դրել է այն հանգամանքը, որ 08.12.2017թ. նշանակված հերթական դատական նիստը 30 րոպե ժամանակով ընդմիջելուց հետո Պատասխանողը չի ներկայացել դատական նիստին չներկայանալու հարգելի պատճառների մասին Դատարանին նախապես չի տեղեկացրել: Դատարանը դա գնահատել է դատական նիստին ներկայանալուց չարամտորեն խուսափել և անհարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ:

Վերոնշյալ դատական նիստին մեղադրող դատախազ Պ.Պետրոսյանի կողմից միջնորդություն է ներկայացվել Պատասխանողի պաշտպանյալ Գ. Սաֆարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին: Միջնորդությունը ներկայացվել է բանավոր: Միջնորդությունը ներկայացնելուց անմիջապես հետո պաշտպանական կողմը խնդրել է տրամադրել միջնորդության գրավոր օրինակը: Այնուհետև Դատարանը մեղադրող Պ.Պետրոսյանից հարցրել է՝ արդյոք վերջինս ներկայացնում է միջնորդության գրավոր օրինակը, որին ի պատասխան՝ մեղադրողը նշել է, որ չի ներկայացնում:

Այնուհետև Դատարանն արձանագրել է. որ միջնորդությունն արձանագրվել է համակարգչային ձայնագրառման միջոցով, և պաշտպանական կողմն էլ այն լսել է, որին ի պատասխան՝ պաշտպանական կողմը խնդրել է ողջամիտ ժամանակ տրամադրել, որպեսզի հնարավորություն ունենա լսել, վերարտադրել և պատրաստել առարկություն՝ նախագահող դատավորին հայտնելով, որ պաշտպանական կողմին անհրաժեշտ է դատական նիստի ձայնագրառման կրիչը և համակարգիչ: Դատարանն առաջարկել է ժամանակ տրամադրել միջնորդության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար և դատական նիստն ընդմիջել 30 րոպե ժամանակով: Պատասխանողը Դատարանին հայտնել է, որ պաշտպանության կողմին 30 րոպե ընդմիջումը չի բավականացնի՝ նշելով, որ մինչև աշխատանքային օրվա ավարտ, այն է՝ մինչև ժամը 18:00 ընդամենը մեկ ժամ է մնացել, իր համակարգչի մարտկոցը լիցքաթափված է, 30 րոպեի ընթացքում տեխնիկապես հնարավոր չէ լսել դատական նիստի ձայնագրությունը, ինչպես նաև հնարավոր չէ գրի առնել և պատրաստել առարկություն: Նշվել է նաև, որ հաշվի առնելով դատական նիստերի դահլիճում վերոնշյալ միջնորդության ընթերցման պահին տեղի ունեցող իրարանցումը և աղմուկը՝ անցանկալի բարդություններ են առաջացել մեղադրողի խոսքը լիարժեք ունկնդրելու առումով:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ ակնհայտ է, որ մեղադրողի ներկայացրած միջնորդությանը պաշտպանական կողմը կարող էր առարկել միայն դատական նիստերի համակարգչային ձայնագրությունը լսելուց հետո և համապատասխան աշխատանքային պայմանների պարագայում:

Միևնույն ժամանակ Պատասխանողի կողմից փորձ է արվել բացատրել դատավոր Տ. Գրիգորյանին, որ հաշվի առնելով միջնորդության կարևորությունը և դրա դեմ առարկելու անհրաժեշտությունը, ինչպես նաև առարկություն ներկայացնելու անհնարինությունը՝ դատավորի համար առնվազն պետք է պարզ լինի, որ պաշտպանների կողմից դատական նիստը հետաձգելու միջնորդությունը դիտավորյալ դատական նիստը ձգձգելու և կամ այլ միտում չունի, ուստի՝ միանգամայն ողջամիտ է պաշտպանների պահանջած մեկ ու կես ժամի տրամադրումը՝ օբյեկտիվ անհրաժեշտությունից ելնելով: Վերոնշյալը հաշվի առնելով՝ Պատասխանողը դարձյալ միջնորդել է հետաձգել դատական նիստը՝ հնարավորություն տալով ներկայացված խափանման միջոցի ընտրության միջնորդության դեմ ներկայացնել առարկություն:

Դատարանը, ի պատասխան Պատասխանողի հիմնավորումների, նշել է, որ իր դիրքորոշումն անփոփոխ է:

Այնուհետև, Պատասխանողը փորձել է մեկ այլ միջնորդություն ներկայացնել, սակայն Դատարանը թույլ չի տվել: Վերոհիշյալ 30 րոպե ընդմիջումն ավարտվելուց և դատական

նիստը վերսկսվելուց հետո Պատասխանողի գործընկեր Տիգրան Հայրապետյանն իր անունից ներկայացրել է միջնորդություն դատական նիստի ձայնագրության տրամադրման և դատական նիստը հետաձգելու վերաբերյալ: Ի պատասխան պաշտպան Տիգրան Հայրապետյանի միջնորդության՝ դատավոր Տաթևիկ Գրիգորյանը նշել է, որ նիստն արդեն իսկ ընդմիջվել էր 30 րոպե ժամանակով, ուստի՝ պաշտպանական կողմը զրկված չէր այդ ընթացքում դատական նիստի ձայնագրությունը վերցնելու, վերարտադրելու և ապա դրանց ծանոթանալու հնարավորությունից և վերոգրյալը հաշվի առնելով՝ դատարանը որոշում է կայացրել Տիգրան Հայրապետյանի միջնորդությունը մերժելու վերաբերյալ:

Պատասխանողն իր առարկություններն ամփոփում է՝ հետևյալ հանգամանքների մատնանշմամբ.

Նախագահող դատավորից պահանջվել է միջնորդության գրավոր օրինակ կամ նիստի ձայնագրառման կրիչ, ինչպիսի պահանջներն ըստ էության (անկախ դրանց տրված ձևական և թվացյալ բացատրություններից) մերժվել են:

Պատասխանողը հայտնել է, որ առհասարակ դատական նիստի ձայնագրառման կրիչները տրամադրելու համար Տ.Գրիգորյանը պաշտպանից պահանջել է վճարել պետական տուրք, նույնիսկ մոտակա բանկ (թեև սովորաբար ժամը 16:30 բանկերում վճարումներ կատարել հիմնականում հնարավոր չէ) այցելելու և պետական տուրք վճարելու պարագայում 30 րոպեն չէր բավարարի նույնիսկ կրիչը ստանալու համար:

Պատասխանողին անհասկանալի է, թե ինչպես էր դատավոր Տաթևիկ Գրիգորյանը պատկերացնում 30 րոպե ընդմիջման ընթացքում դատական նիստի համակարգչային ձայնագրառման կրիչի ստացումը, տեխնիկական միջոցների բացակայության պայմաններում ձայնագրության լսելն ու վերարտադրելը և ապա այդ ամենի հիման վրա հիմնավոր առարկության պատրաստումը:

Ընդմիջում հայտարարելուց հետո, քանի որ դատարանի կողմից Պատասխանողին չի տրամադրվել ո՛չ ձայնագրառման կրիչը, ո՛չ համակարգիչ, ո՛չ աշխատանքային սենյակ, Պատասխանողն ստիպված վերադարձել է գրասենյակ, որպեսզի հնարավորություն ունենա ներկայացված միջնորդության կապակցությամբ առարկությունները շարադրել և համապատասխան իրավական հիմնավորվածությունն ուսումնասիրել: Պատասխանողի համար առավել ընդունելի է գնահատվել կոնկրետ այդ տարբերակը, քան Դատարանի շենքում ուղղակի սպասելը: Սակայն ճանապարհային երթևեկության ազդեցության պատճառով նրան ոչ միայն 30 րոպեում, այլև մեկ ժամում հնարավոր չի եղել հասցնել: Այնուհետև Պատասխանողին զանգահարել են գործընկերները և հայտնել, որ նիստն ավարտվել է:

Ըստ Պատասխանողի՝ դատավորի տարբեր ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում ինքը զրկվել է իր պաշտպանյալ Գևորգ Սաֆարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ մեղադրողի միջնորդության դեմ առարկություն ներկայացնելու հնարավորությունից:

Պատասխանողը կարծում է, որ իր գործողությունները չեն կարող գնահատվել որպես դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք: Փոխարենը՝ նախագահող դատավորը պետք է պարզեր, թե որն է եղել պատճառը, որ Պատասխանողը չի ներկայացել դատական նիստին և միայն դրանից հետո, գնահատելով դրա հարգելի կամ ոչ հարգելի լինելու հանգամանքը, որոշում կայացներ:

Խորհրդի նիստին Պատասխանողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին:

3.3. <u>Վկաների ցուցմունքները</u>.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

28.02.2018թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ Հունան Բաբայանը կազմել է եզրակացություն, որի համաձայն՝ հաստատված է համարել հետևյալ փաստերը.

08.12.2017թ. դատական նիստի ընթացքում պաշտպան Տիգրան Եգորյանը դատարանին միջնորդել է դատական նիստը հետաձգել՝ մեղադրողի միջնորդության կապակցությամբ կարծիք հայտնելու համար: Դատարանը դատական նիստը չի հետաձգել, սակայն այն ընդմիջել է 30 րոպե ժամանակով: Դատական նիստը վերսկսելուց հետո պաշտպան Տիգրան Եգորյանը դատական նիստին չի ներկայացել:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 01.03.2018 թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 24.07.2018թ.՝ ժամը՝ 18:35-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը՝ բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս*:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

- Թիվ ԵԱԴԴ/0028/01/17 փաստաբան Տիգրան Եգորյանը հանդիսանում է Գ. Սաֆարյանի պաշտպանը:
- Թիվ ԵԱԴԴ/0028/01/17 քրեական գործով 08.12.2017թ. դատական նիստում մեղադրող Պ. Պետրոսյանի կողմից միջնորդություն է ներկայացվել ամբաստանյալ Գ.Սաֆարյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու մասին: Ամբաստանյալի պաշտպան փաստաբան Տիգրան Եգորյանը միջնորդություն է ներկայացրել դատական նիստը հետաձգելու մասին՝ մեղադրողի միջնորդության վերաբերյալ կարծիք հայտնելու համար ժամանակ տրամադրելու պատճառաբանությամբ: Դատարանի կողմից միջնորդությունը մերժվել է: Միաժամանակ Դատարանը որոշել է դատական

նիստն ընդմիջել 30 րոպե ժամանակով՝ Տիգրան Եգորյանին հնարավորություն տալով միջնորդության վերաբերյալ կարծիք հայտնել:

- Ամբաստանյալի պաշտպան Տիգրան Եգորյանը Դատարանին հայտնել է, որ պաշտպանական կողմին 30 րոպե ընդմիջումը չի բավականացնի, մինչև աշխատանքային օրվա ավարտ՝ 18:00-ն մնացել է ընդամենը մեկ ժամ, իր համակարգչի մարտկոցը լիցքաթափված է, և 30 րոպեի ընթացքում հնարավոր չէ գրի առնել և պատրաստել առարկություն: Պաշտպանը նաև նշել է, որ քանի որ միջնորդության ընթերցման պահին դահլիճում իրարանցում էր և աղմուկ, պաշտպանական կողմը հնարավորություն չի ունեցել լիարժեք ունկնդրել մեղադրողի խոսքը, ուստի՝ Դատարանից խնդրում է տրամադրել միջնորդության գրավոր օրինակը կամ դատական նիստի ձայնագրառման կրիչը: Դատարանը մերժել է պաշտպանի խնդրանքը. միջնորդության գրավոր օրինակը կամ դատական նիստի ձայնագրառման կրիչը Տիգրան Եգորյանին չի տրամադրվել, իսկ ընդմիջման ժամկետը թողնվել է նույնը՝ 30 րոպե:
- Դատարանը որոշել է դատական նիստն ընդմիջել 30 րոպե ժամանակով՝ Տիգրան Եգորյանին հնարավորություն տալով միջնորդության վերաբերյալ կարծիք հայտնել: Նշված ժամկետի ավարտից հետո վերսկսված դատական նիստին փաստաբան Տիգրան Եգորյանը չի ներկայացել և չներկայանալու հարգելի պատճառների մասին Դատարանին նախապես չի տեղեկացրել:

Նշված փաստերը հաստատվում են Որոշմամբ, Պատասխանողի բացատրությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Տիգրան Եգորյանը փաստաբան է հանդիսանում 15.10.2011թ., և 2015-2017թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 12 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, որոնց մեջ չի հաշվարկվում սույն կարգապահական վարույթը:

Խորհրդի 03.03.2016թ.թիվ ԿԳ/46-Ա, 03.10.2016թ.թիվ ԿԳ/107-Ա, 31.10.2016թ.թիվ ԿԳ/157-Ա, 31.10.2016թ. թիվ ԿԳ/158-Ա, 11.11.2016թ. թիվ ԿԳ/162-Ա, 11.11.2016թ. թիվ ԿԳ/163-Ա որոշումներով Տիգրան Եգորյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթները կարճվել են:

Խորհրդի 23.11.2016թ. թիվ ԿԳ/188-Ա որոշմամբ Տիգրան Եգորյանը ենթարկվել կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 2.2.3 ենթակետի խախտման համար: Նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն: Որոշումը դատական կարգով բողոքարկվել է:

Խորհրդի 16.10.2017թ. թիվ ԿԳ/92-Ա որոշմամբ Տիգրան Եգորյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 2.7.2 և 2.6.1 ենթակետերի խախտման համար: Նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ իր հաշվին 8 ժամ լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ քրեական դատավարության բնագավառի թեմայով: Որոշումը դատական կարգով բողոքարկվել է:

Խորհրդի 22.02.2018թ.թիվ ԿԳ/24-Ա որոշմամբ Տիգրան Եգորյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար Նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն: Որոշումն ուժի մեջ չի մտել:

Խորհրդի 01.03.2018թ.թիվ ԿԳ/30-Ա որոշմամբ Տիգրան Եգորյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար Նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն: Որոշումն ուժի մեջ չի մտել:

Խորհրդի 05.04.2018թ. ԿԳ/61-Ա որոշմամբ Տիգրան Եգորյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար Նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն: Որոշումն ուժի մեջ չի մտել:

Խորհրդի 17.05.2018թ. ԿԳ/86-Ա որոշմամբ Տիգրան Եգորյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 4.1 կետի խախտման համար Նրա նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն: Որոշումն ուժի մեջ չի մտել:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Տիգրան Եգորյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

7.1. Կանոնագրքի 4.1 կետի խախտման մասով.

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

Նշված կանոնը նաև վկայակոչող (բլանկետային) է, քանի որ հղում է կատարում փաստաբանի և դատարանի փոխհարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ **պաշտպանը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով**:

Վերլուծելով վերը նշված կանոնների պահանջները, Խորհուրդը գտնում է, որ սույն գործով պարզման ենթակա է այն հանգամանքը, թե.

արդյո՞ք Պատասխանողն *առանց հարգելի պատճառի դատական նիստին չի ներկայացել՝ դրանով անհարգալից վերաբերմունք դրսևորելով Դատարանի նկատմամբ*:

Ըստ հաստատված փաստերի, թիվ ԵԱԴԴ/0028/01/17 քրեական գործով Դատարանը որոշել է դատական նիստն ընդմիջել 30 րոպե ժամանակով՝ Տիգրան Եգորյանին հնարավորություն տալով միջնորդության վերաբերյալ կարծիք հայտնել: Նշված ժամկետի ավարտից հետո վերսկսված դատական նիստին փաստաբան Տիգրան Եգորյանը չի ներկայացել և չներկայանալու հարգելի պատճառների մասին Դատարանին նախապես չի տեղեկացրել: Պալատի Խորհուրդը փաստաբան Տիգրան Եգորյանի՝ առանց հարգելի պատճառի դատական նիստին չներկայանալու վարքագիծը քննարկելիս, ուսումնասիրության առարկա է դարձնում նաև այդ վարքագծի դրսևորման պատճառները:

Խորհուրդը հիշեցնում է, որ փաստաբանը, ունենալով առանձնահատուկ հասարակական կարգավիճակ, ունի իրավական և բարոյական պարտականությունների լայն շրջանակ: Փաստաբանը՝ որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձ, իրավունք ունի և պարտավոր է բարեխղճորեն պաշտպանել իր վստահորդների իրավունքներն ու օրինական շահերը՝ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով: Հետևաբար փաստաբանի պարտականությունների հասցեատերերը ոչ միայն վստահորդներն են, այլև արդարադատության գործառույթ իրականացնող մարմինները՝ դատարանները: Փաստաբանի այս երկակի կարգավիճակը բխում է Կանոնագրքի 1.1 ենթակետի պահանջներից, որի համաձայն՝ փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:

Հաշվի առնելով փաստաբանի գործառույթների և դրանցից բխող պարտականությունների բազմազան բնույթը՝ ՀՀ օրենսդրությամբ և Կանոնագրքով սահմանված են փաստաբանի այն հիմնական պարտականությունները, որոնք նա ունի ինչպես վստահորդի, այնպես էլ՝ դատարանի հետ հարաբերություններում: Մասնավորապես, դատարանի հետ փաստաբանի հարաբերությունների կանոնակարգմանն է նվիրված Կանոնագրքի 4.1 կետը, որը, լինելով բլանկետային իրավադրույթ՝ հղում է պարունակում փաստաբանի և դատարանի հարաբերությունները կարգավորվող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

Սույն գործի շրջանակներում իրավական նշանակություն ունեն փաստաբանի հետևյալ դատավարական պարտականությունները՝ ներկայանալ վարույթ իրականացնող մարմնի՝ տվյալ դեպքում՝ դատարանի կանչով, ենթարկվել դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին և առանց դատական նիստը նախագահողի թույլտվության՝ չլքել դատարանի դահլիճը, եթե չի հայտարարվել ընդմիջում: Սույն

պարտականությունների չկատարումը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածի 1-ին մասի, հանդիսանում է անհարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ:

Փաստաբանի դատավարական պարտականությունները կազմում են նրա իրավական կարգավիճակի կարևոր մասը, քանի որ փաստաբանն ունի կրկնակի առաքելություն՝ մի կողմից պաշտպանել իր վստահորդի շահերն օրենքով չարգելված բոլոր միջոցներով, իսկ մյուս կողմից նպաստել դատարանի կողմից պատշաճ արդարադատության իրականացմանը: Վերջինս կարող է իրացվել, եթե փաստաբանն ըստ պատշաճի պահպանում է դատավարական ընթացակարգի կանոնները, իր վարքագծով նպաստում է դատարանի կողմից գործի արագ և օբյեկտիվ քննությանը: Դա ներառում է նաև փաստաբանի կողմից դատարանի օրինական կարգադրություններին և դատական նիստի սահմանված կարգին անշեղորեն հետևելը՝ այդպիսով դատարանի նկատմամբ ցուցաբերելով հարգանք, որպիսի պարտականությունը նրա վրա դրված է ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, այնպես էլ՝ Կանոնագրքով:

Սույն կարգապահական գործի նյութերով Պալատի խորհուրդը հաստատված է համարում այն հանգամանքը, որ փաստաբան Տիգրան Եգորյանը հիշյալ քրեական գործի շրջանակներում հնարավորություն չի ունեցել պատշաճ իրավաբանական օգնություն տրամադրել իր վստահորդին, դատարանի կողմից տրամադրած 30 րոպե ընդմիջման ժամանակահատվածում, այն պարագայում, երբ՝ (1) ըստ փաստաբանի համակարգչի մարտկոցը լիցքաթափված է, (2) աղմուկի պատճառով պաշտպանական կողմը հնարավորություն չի ունեցել լիարժեք ունկնդրել մեղադրողի խոսքը և (3) դատական նիստի ձայնագրառման կրիչը Տիգրան Եգորյանին չի տրամադրվել:

Այս պայմաններում, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Տիգրան Եգորյանը Կանոնագրքի 4.1 կետի խախտում թույլ չի տվել:

7.2 Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման մասով.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:*

Սույն իրավադրույթի նորմատիվ էությունը կայանում է նրանում, որ փաստաբանը, ելնելով իր իրավապաշտպան գործառույթից, պարտավոր է դրսևորել իր նշված գործառույթով պայմանավորված հասարակական հատուկ կարգավիճակին հարիր ազնիվ վարքագիծ վստահորդի հետ հարաբերություններում և առավելագույն ջանքեր գործադրել իր վստահորդի շահերը բոլոր օրինական միջոցներով պաշտպանելու ուղղությամբ:

Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործի քննության ընթացքում չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնցով կհաստատվեր Պատասխանողի կողմից Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտում թույլ տալու հանգամանքը: Ուստի, Խորհուրդը գտնում է, որ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, ՀՀ Փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի նախագահի 27.12.2017թ. թիվ 485-Ա/ԿԳ-17192 որոշմամբ փաստաբան Տիգրան Եգորյանի (արտոնագիր՝ 1187) նկատմամբ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյան

24 հուլիսի 2018թ.
թիվ ԿԳ/138-Ա
ք. Երևան